



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

174/84 -L « 12 » 09 2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ՝ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003 թ. մարտի 27-ի թիվ 347-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. 2022 թ. հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանում ուսումնադաստիարակչական աշխատանքներին անմիջապես մասնակցող բոլոր աշխատողները պարտավոր են անցնել առողջական վիճակի պարբերական բժշկական զննություն:

2. Սահմանել, որ աշխատողը պարտավոր է նշված ժամանակահատվածում իր ֆակուլտետի դեկանատից (վարչական համակազմը՝ ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնից) վերցնել իր սանիտարական գրքույկը, սահմանված կարգով այցելել ներքոհիշյալ բուժհաստատությունները և անցնել (անվճար հիմունքներով) առողջական վիճակի պարբերական բժշկական զննություն.

- ք. Երևանի «Թիվ 1 պոլիկլինիկա» (հասցե՝ ք. Երևան, Լեոյի փող., 17),
- ք. Երևանի «Թիվ 4 պոլիկլինիկա» (հասցե՝ ք. Երևան, Մոսկովյան փող., 13),
- ք. Երևանի «Թիվ 5 պոլիկլինիկա» (հասցե՝ ք. Երևան, Գարեգին Հովսեփյան փող., 8):

3. Անվճար բժշկական զննություն անցնելու համար անձը հաստատող փաստաթղթի ներկայացումը պարտադիր է:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝

Հ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ